

## ՀՅՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՅՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց ազգութիր Հայրապետ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղաբն Ա. Կաթողիկոսի անունից, հոկտեմբերի 6-ի երեկոյան ժամը 8-ին, Երևանի Ալբանիա հյուրանոցի շքեղ դահլիճներում, ի պատիվ Աղօյին-եկեղեցական ժողովի Հարգարժան պատգամավորների, ուստավլորների, օտար և Հայ հյուրերի, կազմակերպվեց Հայրապետական հաշեկերություն, որին ներկա էին ավելի քան 200 հրավիրյալներ:

Ճաշկերությին ներկա էին Ռուսական ազգության եկեղեցու և Մոսկվայի և Համայն Ռուսական ազգության Պատրիարք Ալեքսիի կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսի օժման և գահակալության հանդիսություններին մասնակցելու համար Ս. Էջմիածին ժամանած ներկայացուցիչները՝ Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Պիտիրիմը, Պակովի և Պորխովի եպիսկոպոսներուն իսպանները, ինչպես և Վրացական եկեղեցու ներկայացուցիչներ՝ Բաթումի-Շեմոկմեդի և Զքոնդիի միտրոպոլիտ Եփրեմը, Թրիլիսի Սիոնի Մայր Տաճարի ավագ քահանա Ալեքսանդր Լուկի Գարունիան և Քութայիսի Մծվանեկվիլիի Հրեշտակապետաց Եկեղեցու ավագ քահանա Նաում Գրիգորի Հավիանիձեն:

Հայրապետական սեղանին մասնակցում էին Մայր Աթոռի ամբողջ միարանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը:

Ներկաների թվում էին նաև ՍՍՌՄ Մինիստրությունի Սովորտին կից Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին, Հայկական ՍՍՌ Մինիստրությունի Սովորտին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հ. Գ. Գրիգորյանը, Արևոտարական նախագահ Վ. Վ. Աստվածածինը, Երևանի հյուրերը, արտահայտելով բովանդակ հյության իզձերն ու դանկությունները, մաղթեցին, որ նորընտիր Հայրապետը նստելով Ս. Լուսավորչի պատմական Գանձի վրա, նոր ուժերով ու եռանդով, եկեղեցական իրության ու հյութենասիրության անշեղ և լուսավոր ճանապարհով, իմաստուն զեկավարությամբ վարի Հայ եկեղեցու նավը, ի պայծառություն, ի ծաղկումն և ի բարօրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հայատանյաց Առաքելական եկեղեցու, Հայ ժողովրդի և Հայրենիքի, առավել ևս ամրապնդելով ու պահպանելով Հայ եկեղեցու և Հայ ժողովրդի եկեղեցական միասնականության և պահպանի միության սրբազն ու նվիրական հիմքերը:

Ներ և նկարիչների Հյուրերի շարքում են անվանի բանաստեղծ Ավետիք Խսահակյանը, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, պրոֆ.-դոկտ. Ա. Գ. Արրահամյանը, պրոֆ. Ա. Առաքելյանը և շատ ուրիշներ:

Հայրապետի տերունական աղոթքով բացվեց ձոխ սեղանը: Տոնական ուրախ ու խանդականությունն ու համախմբվածությունը Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի ու նրա նոր ու արժանավոր Գահակալի շուրջ:

Ողջունի, շնորհավորության և շնորհակալության սրտագին խոսք ասացին, Հայրենասիրական վառ արտահայտություններով զեղուն խոսքեր Հյուսիսային Ամերիկայի հայոց Յանձնական թեմի առաջնորդ Մամբրի արքեպիսկոպոս Գալֆայանը, Եղիպատոսի թեմի առաջնորդ Մամբրի արքեպիսկոպոս Միքունարը, Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ Սիոն եպիսկոպոս Մանուկյանը և ուրիշներ Սրբազն հյուրերը, արտահայտելով բովանդակ հյության իզձերն ու դանկությունները, մաղթեցին, որ նորընտիր Հայրապետը նստելով Ս. Լուսավորչի պատմական Գանձի վրա, նոր ուժերով ու եռանդով, եկեղեցական իրության ու հյութենասիրության անշեղ և լուսավոր ճանապարհով, իմաստուն զեկավարությամբ վարի Հայ եկեղեցու նավը, ի պայծառություն, ի ծաղկումն և ի բարօրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հայատանյաց Առաքելական եկեղեցու, Հայ ժողովրդի և Հայրենիքի, առավել ևս ամրապնդելով ու պահպանելով Հայ եկեղեցական միասնականության և պահպանի միության սրբազն ու նվիրական հիմքերը:

Հայրապետական սեղանին ողջունի խոսք ասաց Մոսաց Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Պիտիրիմը: Վրաց Եկեղեցու և Կաթողիկոսության ողջունն ու սրտագին շնորհավորությունները բերեց Վրաց

Եկեղեցու ներկայացուցիչ Եփրեմ միտրոպոլիտը՝ շնորհավորելով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն այս նոր և արժանագոր ընտրության համար:

Շնորհակալության անկեղծ խոսքերով հանդես եկան նաև Տ. Հայկապուն և Տ. Սերովիք նորապատճեն եպիսկոպոսները, որոնք խոստացան հավատարիմ լինել ու կատարել իրենց նվիրական պարտքը հանդեպ Մայր Աթոռ Ս. էջմիածնի և հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու սրբազն շահը վեր դասելով ամեն-

նի առատ բարիքները: Վերջին խոսողը եղավ լեհափառը, որն ասաց:

«Գերաշնորհ սրբազն հայրեր, հարգարձան պատգամավորներ և ուխտավորներ:

Մայր Աթոռ Ս. էջմիածնիք ցնծուրյան պատմական օրեր կապրի, անապես մեկ շաբաթ ի վեր՝ գումարում Ազգային-Եկեղեցական ժողովի, ընտրություն և օճում Ամենայն Հայոց Կարողիկոսի, եպիսկոպոսական ձեռ-



Վեհափառի ելույթը պատվո սեղանի առաջ

ինչից, Հովկելով իրենց հանձնված հոտը բրիստոնեական անշեղ ու ճշմարիտ ճանապարհով:

Հոգեշնորհ Տ. Պատկ, Տ. Գնել և Տ. Հարություն վարդապետները իրենց քաղցրաձայն երգերով ավելացրին հայրապետական սեղանի շուրջ ստեղծված հայրենասիրական ու եկեղեցափական մթնոլորտի խանդավառությունն ու ուրախությունը:

Ժամերն անցնում էին աննկատ, ուրախություն ու ոգլորություն էր տիրում ամեն սեղանի շուրջ և բոլոր հյուրերը գոհումակությամբ վայելում էին հայրապետական սեղա-

նադրություններ, Մրակույս Մեռնի օրինություն: Այս բոլորը՝ վերածնած ու ազատ Մայր Հայրենիքի արևի տակ, Մարտայան դաշտի ոսկի աշնան այս օրերուն: Թիշ անգամներ մեր պատմության ընթացքին այսիան ուրախություններ իրարու հանդիպած են:

Մեր հայրեն ու նախահայրերը, դարեր շարունակ, երազեր են նման երջանիկ օրեր: Մերունդներ և սերունդներ իրարու եւսե փակեցին իրենց աշխերը Ազգի և Հայրենիքի ապագա փառքի տեսիլքը իրենց նողիներուն

մեջ: Այդ երազը իրականություն է այսօր, իրականություն մը, որ զեղեցիկ է ինչպես երազ:

Առզ, ցեծուրյան ու խնդրույան զգացումներով զեղուն, հավաքված այս սեղանի շուրջ, մենք փառ տանք մեր Աստուծուն, և որդ այս սեղանի շուրջ ավելի ևս խորածա ու պայծառանա մենդրայուրյունը, մեր միուրյունը, Ս. Էջմիածնի և Մայր Երկրի սիրով:

Այս պահուս, երբ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մասին կխոսիմ, չեմ կրնար շինչել ուրիշ երանելի օր՝ Ռոդի տաք տարի առաջ, 1945-ին, այս սրանին մեջ և այս սեղանի շուրջ, այստեղ ուր ես կզանձիմ այժմ եստած էին մեր Երկու երշանկահիշատակ մեծագործ Հայրապետները՝ Գևորգ Զ.ը և Գաւելզին Ա.ը, Երկու հարազատ եղբայրներ ի Քրիստոս, Երկու ողբեշչված տոայլաներ, որոնք իրենց բովանդակ կյանքի և վիրեցին եկեղեցին, Ազգի և Հայրենիքին: Այսօր ալ անոնք այտեղ, մեր մեջ են, անոնք ողին մեր վերև կասպանի և կողեշնչե զմեզ: Անոնց ի Քրիստոս եղբայրուրյան, եկեղեցասիրուրյան և հայրենասիրուրյան սուրբ հիշատակին վրա մենք բոլոր կապյալ կանք:

Մեր սեղանը պատված է այսօր նաև ներկայուրյամբը Սովետական Միուրյան Դավանուրյանց մինիստր Պ. Ի. Վ. Պոլյանսկիի և Սովետական Հայաստանի Դավանուրյանց մինիստր Պ. Ի. Հրաչյա Գրիգորյանի, որոնք կենրեկայացնեն այսակ մեր պետական բարեխնամ իշխանուրյունը, այն իշխանուրյունը, որ, ինչպես մեր աշենով կհաստատնեն, իմականար օրինական ազատուրյան և գործնական բարենպատ պայմաններ ստեղծած է եկեղեցական կյանքի կազմակերպման և զարգացման համար: Մենք, հանուն Մայր Արքոնի, հանուն մեր բովանդակ Եկեղեցին շնորհակալուրյուն կիայտնենք Սովետական կառավարուրյան և մեր Հայրենի իշխանուրյան՝ Մեզ ընծայված բոլոր դպրուրյուններուն և բարյացակամ վերաբերումին համար, վստահ ըլլալով, որ նաև նետ այսու պիտի վայելենք նոյն բարյացակամուրյունը, իսկ Մենք անպայմանավոր կերպով պիտի կանգնենք մեր ժողովուրդի, մեր վերածնած Հայրենիքի շահերու կողմին անվարան:

Մեր բատրուրենեն ի վեր մեկ-Երկու անգամ պաշտոնական տեսնակցուրյուններ ունեցանք Պ. Պոլյանսկիին և Պ. Հ.

Գրիգորյանին նետ, Մայր Արքոնի և մեր Եկեղեցին կապված հարցերու շուրջ: Անոնք վափիկանկատուրյունը ունեցան բնակ շանդրապահայու Մեր հաղաքացիուրյան հարցին: Առզ, այս հանդիսավոր առքի նա իմ խոսքը ուղղելով անոնց, կիսնդրեմ, որ հանին միջնորդի պատկան իշխանուրյանց մոտ, ուղղելով ինձ շնորհի Սովետական Հայաստանի հաղաքացիուրյան: Այժմ ես իմ տունն եմ վերապարձած և հպարտ պիտի բլամ իմ Հայրենիքի, իմ բուն Հայրենիքի բաղակացիուրյանը: Կանզի հայտնի է մեզ բարիս, թե հայը ինչ հաղաքացիուրյուն ալ ունենա, նույնական բաղակացին է իր Մայր Հայաստանին:

Մեր այս հոգեկան խնջույքի սեղանին, ուրախ ենք, որ Մեր կողմին կզունին բարձրասահնան ներկայացնութեար Համայն Խոսիք Պատրիարք Նորին Արքուրյուն Ալեքսիի և Վրացական Եկեղեցին Կարողիկոս Նորին Սրբուրյուն Մելիքսենիքի: Այս ապացույց մը ևս Ռուս և Վրաց Պրավուլավ Եկեղեցիներու և Հայաստանայց Եկեղեցին միջև գոյուրյուն ունեցող նըշանքարիտ սիրա և եղբայրական կապերուն, որ մեր սրանք կեցնե բաղց զգացումներով: Մեր նոյն Եկեղեցիներու միջև կապերը ավելի և ամրացան մանավանդ վերշին տարիներուն, աշխարհի խաղաղուրյան համար տարած մեր աշխատանքներով: Այս Քրիստոնեական և համամարդկային Եկեղեցական իդեալի կենսագործման նախապահի վրա, մեր Եկեղեցիները գործակցեցան և պիտի գործակցին անալյալ հավատում՝ թե Սուված մեզ հնու է, վասնզի մենք խաղաղուրյան նետ ենք:

Այս սեղանի շուրջ հավաքված ենք հայեր աշխարհի բոլոր ծագերեն եկած, բայց մեր մեջ օտարեներ չկան: Մենք բոլոր հարազատ զավակներն ենք հայ ժողովուրդի: Այս Երկիրը մերն է, մենք կիրենք զայն մեր սրան բովանդակ շերմուրյամբը:

Կըսի, թե արտասահմանի մեջ կան մարդիկ, որոնք կմտածեն և կծրագրեն բաժնել սիյուտահայուրյունը իր Մայր Արքուն և իր Մայր Հայրենիքին: Գրձվար է հավատալ, որ կրնան գտնվիլ այդպիսի հայեր: Բայց, հակառակ Մեր լավատեսուրյան, երե այնուամենայնիվ կա այդպիսի մտածում և կան մարդիկ, որ կկամենան հանդել Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդի միասնու-

բյունք, անոնց ուղղյալ Մեր խոսքն է՝ «Չե՞ գիտեր, թե ինչ կընեմ»: Վասնզի, Տեր Աստված, երե հայուն հոգիին մեջն դուրս հանվի Ս. Էջմիածինը և Մայր Հայրենիքը, ալ ի՞նչ կմնա մեջ:

Չէ, Մենք շենք ուզեր հավատալ, թե այդպիսի փորձեր ընողներ զանվին: Մենք կիւրագառնեանք հետաքրար Մեր լավատեսուրյան: Ինչ փորձեր ալ կատարվին, ինչ անցողակի երեսոյթներ և պատահառներ տեղի ունենան, Մենք անայլայլարն կհավատանք, թե մեր ժողովուրդը, առաջնորդված անցյակի փորձառութենեն, իր առողջ բնագրով պիտի գտնե իրավ հանապարհը, որ կտանի դեպի հայուրյան Մրրուրյուն Մրրոց էջմիածին և Մայր Հայրենիք:

Մենք հոյժ երշանիկ պիտի ըլլանի, և Մեր հագեոր ու ազգային առամելուրյունը կատարած ըլլալու զգացումնվր պիտի հրեվինք, երե հաջողին Մայր Արոռոր դարձնել անխորտակելի կամուրջ մը, որ միացնե մեր Սփյուռքը Հայրենի հողին:

Մեր երիտասարդ ու տաղանդավոր բանաստեղծերեն Հովհաննես Եիրազը մեր վերածնունդի և լավատեսուրյան զգացումներուն հարազատ բարգմանը կհանդիսանա իր սա տողերով.

«Որպես վշտի դարերն հայոց,  
Այնքան խորե են ձորերն հայոց.  
Որպես կամքի դարերն հայոց,  
Այնքան բարձր են լեռներն հայոց».

Սիրելի հայ ժողովուրդ, անցան «վշտի դարերն հայոց», եկան էկամմի դարերն հայոց: Միանանք բոլոր ամստիր, ձեռք-ձեռքի տանք և զորցնենք մեր ԿԱՄՔԻ ԴԱՐԸ:

Մեր ավերեներով ու տառապաճեներով լեցուն պատմուրյան զգացումը մեր հոգիներուն մեջ, մեր անքիվ անհամար համատակներու այրազ կրկիծը մեր սրտերուն մեջ, մեր ազգային վերածնունդի և Հայրենիքի վերաշինուրյան ցեծուրյան ապրումը մեր կուրծերուն տակ, մեր արդար ու սուր իղձերու իրականացման հավատով զուսեպեղված, մեր հայացք դարձնենք մեր ժողովուրդին և համատակ մեծ բանաստեղծին խոսերով ուխտենի՛:

Հայ ժողովուրդ, «Մենմ՝ զավակներով օգոստափառ, պիտի կերտենք հոր արշալույս»:

Վեհափառ Հայրապետի այս խոսքերը ներկաների կողմից ընդունվեցին բուռն ժափառաբուններով և հոտնկայս:

Ի պատիվ Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների և արտասահմանյան հյուրերի տրված ընդունելություն-ճաշկերույթը անցավ վերին աստիճանի խանդավառ, ուրախ և բարեկամական ջերմ մթնոլորտում:

Ուշ գիշեր էր, երբ Վեհափառ Հայրապետի աղոթքով փակվեց երեկոն:

